46րդ ՏԱՐԻ   Թիւ 556 Կ. ՊՈԼԻՍ   ՓԵՏՐ. 19/4 ՄԱՐՏ 1903   ՉՈՐԵՔՇԱԲԹԻ   5 ԶԻԼՀԻՃՃԷ 19 ՇՈՒՊԱԹ 1318

JOURNAL ARMÉNIEN
MANZOUMÉI-EFKIAR
38, Grand' Rue de la S-Porte, 38
CONSTANTINOPLE

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ՓԱՅՍԼԵԱՆ
ՈՐՈՒ Կ'ՈՒՂՂՈՒԻ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳՐՈՒԹԻՒՆ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
38, Գալաթ Մէյ Քատտէսի, 38
Խմբագրութեան ուղղուած գրութիւններ ետ չեն տրուիր։

# Մանզումէի Էֆքեար

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՌԱՒՕՏԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ. ԳՐԱԿԱՆ. ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

منظومهٔ افکار
ارمنیجه یومی وسیاسی غزته‌در
صاحب امتیازی : اوحانس فرید

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
| | Տարեկան | Վեցամսեայ |
|---|---|---|
| Պոլսոյ համար | 80 ղր. | 50 ղ. |
| Գաւառներու համար | 108 » | 60 » |
| Արտասահմանի համար | 25 ֆր. | 18 ֆ. |

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Մէկ անգամի համար, տողը 5 ղրուշ, Մէկ անգամէ աւելի ծանուցմանց համար մասնաւոր պայմաններ։

10 ՓԱՐԱ   "ՄԱՆԶՈՒՄԷ,, ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ   10 ՓԱՐԱ

ՎԱՂՈՒԱՆ ԹԻՒՈՎ
"ՍՏՐԻՏԵԱՅԻ ՓԱՆԱՅԻՐԸ,,
ՑՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆԻ

## ՄԵԾ ՊԱՀՔԻ ԽՈՀԵՐ

### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՀԱՅԵԱՑՔԸ
ՊԱՀՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Այսօր՝ չորեքշաբթի՝ առաջին օրն է Պահքին, ուր Հայ. Եկեղեցին կը նշէ քառասնօրեայ պահոց արարողութիւնները և Արեւագալի երգերը։ Մեծ է խորհուրդը այս շրջանին. կրօնական իր սեղմ ու անցուկ շրջանակէն դուրս, աւելի տարածուն, աւելի ընկերային հանգամանքներ ունի այս քառասուն օրուան շրջանը — Մեծ Պահքը։ Զղջումի, մարմնամռայեցութեան շրջան մըն է ան. ... մարդկային չար բնական ... թուլացած ... Նապաշտ ու հաճոյասէր կեանքի մեղկ ... Մեծ Պահքը, որ ... կրօնական ... և կը պարուրէ միեւնոյն ժամանակ։ Հոգիին ...

...

Պօղոս առաքեալ կը միացնէ այդ երկուքը իր մէջ։ Հոս պիտի հրատարակենք Պօղոս առաքեալին հայեացքը Մեծ Պահքին վրայ, և հոն պիտի երեւայ թէ այդ Մեծ մարդը, այդ սըր-

բազան առաքեալը ի՛նչ կ'ըմբռնէր Մեծ Պահքով. հոն պիտի տեսնուի թէ այդ գիտնականը ի՛նչ կը զգար Մեծ Պահքին նկատմամբ և ինչ կը խորհէր անոր մասին։ Գիտնակա՛ն... Բայց անշուշտ։ Պօղոս առաքեալ, առաքեալ ըլլալէ առաջ ... փիլիսոփայ մըն է, գիտութեան զարգացումի ամէն չըրջաններուն մէջ ալ գնահատման արժանի։ Տարսոնի մէջ ուսած է ուսանողական երկար կեանքով մը, և յետոյ ինքնազարգացումով առաջ տանելով իր ստացած հմտութեան սերմերը, հասած է վիճակի մը՝ որուն յաջողած ... Ընկերային գիտութեանց վրայ ճառող մեծ գլուխ մըն է Պօղոս առաքեալ, իմաստասիրական ամէն հարց չօշափող ճեղինակ մըն է. վկայ՝ իր Թուղթերը պարզապէս, ու՛ րա՛ւ է։ Անոնց մէջ ոճի ու գաղափարի գեղեցիկ զուգորդութիւն մը ցոյց կու տան բացայայտօրէն թէ, Աստուծմէ ներշնչուած մը ըլլալով հանդերձ կարող ճարտասան մըն ալ է, և այդ իսկ պատճառաւ կրցած է այնքան գեղեցկօրէն հարուածել պէտք չեղածը, գովել գեղեցիկն ու պատշաճը, իր սուր դատողութեամբ վճռել ու դատել ու դատապարտել։ Իրեն պէս անձ մը, — իրեն պէս քրիստոնեայի մը պէտք էր ըսել, միեւնոյն ժամանակ սրբազան և գիտնական, — հայեացքը Մեծ Պահ-

...

ոըը, Տէրոջը համար կը պահէ, և ան որ չպահեր օրը, Տէրոջը համար չպահեր։ Ան որ կ'ուտէ, Տէրոջը համար կ'ուտէ, որովհետեւ գոհութիւն կուտայ Աստուծոյ, և ա՛ն որ չուտեր, Տէրոջը համար չուտեր և գոհութիւն կուտայ Աստուծոյ։ Անոր համար որ ոչ մէկը իր անձին համար չապրիր, ինչպէս նաեւ ոչ ալ կը մեռնի իր անձին համար։ Որովհետեւ թէ որ ապրինք Տէրոջը համար կ'ապրինք և թէ որ մեռնինք Տէրոջը համար կը մեռնինք, ուրեմն թէ՝ ապրինք թէ մեռնինք Տէրոջն ենք մենք։ Քրիստոս ալ անոր համար մեռաւ ու ապրեցաւ, որ թէ՛ մեռելներուն ու կենդանիներուն իշխէ, իսկ դուն ինչո՞ւ կը քննադատես եղբայրդ կամ կ'անարգես զայն, չէ՞ մի որ ամէնքս ալ Քրիստոսի ատեանին առջեւ պիտի ներկայանանք, որովհետեւ գրուած է թէ, ես կենդանի եմ կ'ըսէ Տէրը որ ամէն ծունկ իմ առջեւս պիտի չոքի և ամէն լեզու Աստուծոյ պիտի խոստովանի։ Ուրեմն ամէն մարդ իր անձին համար միայն հաշիւ պիտի տայ Աստուծոյ։ Ուստի ալ զիրար չքննադատենք, այլ աս որոշումը հաստատենք մեր մտքին մէջ թէ՝ պէտք չէ գայթակղեցնենք մեր եղբայրները։ Ես գիտեմ հաստատապէս թէ ոև է բան մը պիղծ չէ ինքնիրենը, բայց երբ մէկը պիղծ կը սեպէ զայն, այն ատեն կը պղծուի։ Եթէ կերակուրի համար քու եղբայրդ պիտի գայթակղեցնես, աղէկ բան մը ըրած չպիտի ըլլաս, կերակուրի համար մի կորսնցներ զայն՝ որուն համար Քրիստոս մեռաւ։ Արդ. չըլլայ որ ձեր իբր բարիք գործած բանը բանբասանքի առիթ ըլլայ։ Աստուծոյ Արքայութիւնը ուտելիք խմելիք չէ, այլ արդարութիւն, խաղաղութիւն և խնդութիւն Հոգւոյ Սրբոյ։ Երբ մէկը այս բաներով Քրիստոսի կը ծառայէ, Աստուծոյ հաճելի է և մարդոց գովելի։ Հե-

...

չէ որ կ'ուտէ, ինչ որ հաւատքով չէ՝ մեղք է։

Ծ. Խ. — Այս արտագրումը Բողոքականներու Թարգմանած Աշխարհաբար Աստուածաշունչի 1893ի տպագրութենէն ըրինք, առանց մեր ձեռքը ունենալու գրաբար բնագիրը և աւելի դիւրահասկնալի ըլլալու համար, տեղ տեղ պարզաբանեցինք։

Յայտնի է թէ, ճերմակաբուժութիւնը ի՛նչ մեծ բարիք մը եղած է երկրագործներուն համար, անոնց պարգեւելով իրենց սովորական ցաւերուն կրկնապատիկ վաստակ մը, համեմատաբար նուազ չարչարանք պահանջելով իրենցմէ, բայց ցաւալի է որ ճակատակ Հանր. Պարսուց Վարչութեան ցոյց տուած այնչափ հոգածութեան, սգիտութիւնը մուտ գտած է նաեւ այս արհեստէն ալ ներս ուր կը սկսի աւերներ գործել մէկ երկու տարիէ ի վեր։ Ջերմապէս կը յանձնարարենք ճերմակի գործով զբաղողներուն, կարդալ այս ձեռնհասօրէն գրուած յօդուածը ու գիտական ճշմարտութիւններուն քիչ մը աւելի հպատակելով ազատիլ մեծամեծ վնասներէ, որոնք խիստ ծանր են ոև է ճերմակաբուծի համար մանաւանդ երբ նկատողութեան առնուի թէ՝ ամէն ծախսերուն ու աշխատութիւններուն աւարտելէն ետքն է որ յայտնի կ'ըլլայ հունտերու ստորնութիւնը ու այն տարուան բերքին անյաջողութիւնը։

## ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄԸ
ՈՒ
ՁԱՅՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Երկու տարիներէ ի վեր յաջորդա-

...

«ՄԱՆԶՈՒՄԷ»Ի ԹԵՐԹՕՆԸ

ՔԱՍԻՄ   71

## Անձուռ Հանգոյց Մը

ՎԷՊ
Տեղական-ընտանեկան կեանքէ

### ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Ե.

Վրացուհիին անկեղծ խոստովանութիւններն ու սրտաշարժ ձեւերը խոր տպաւորութիւն ըրին քահանային վրայ, որ խորհիլ սկսաւ։

Կինը խօսակցին տկար վայրկեաններէն օգտուելու գիտումով,

— Դուք, Սուրբ Հա՛յր, ըսաւ, երբ այնչափ կը խղճահարիք եկեղեցւոյ կանոններուն հակառակ գործելէ, չեմ կարծեր որ իմնալու մօտ եղած կնոջ մը ձեռք չկարկառէք ու ձգէք որ իր անմեղ զաւակը յաւիտենապէս դժբախտ, անպատիւ ու մեղաւոր ապրի ան։

— Շատ դժուար կացութեան կ'ենթարկես զիս զաւակս, հառաչեց քահանան, չկրնալով որոշում մը տալ այս

...

